# ԿՈՄՊՅՈՒՏԵՐԱՅԻՆ ՏՈՄՈԳՐԱՖԻԿ ԿՈՆՏՐԱՍՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԿԵՐԱԿԱՅԻՆ ՖԱԶԱՅԻ ԷՖԵԿՏԸ ՀԵՊԱՏՈՑԵԼՅՈՒԼԱՐ ԿԱՐՑԻՆՈՄԱՅՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՄՈՏ

**Հարությունյան Գ.Ա.**

**ՀՀ ՊՆ Կենտրոնական կայազորային զինվորական հոսպիտալ, ՀՀ, Երևան**

**,Նաիրիե բժշկական կենտրոն, ՀՀ, Երևան**

Հեպատոցելյուլար կարցինոմայով (ՀՑԿ) 27 հիվանդի մոտ կատարվել է լյարդի կոնտրաստային կոմպյուտերային տոմոգրաֆիա: Ուսումնասիրվել են զարկերակային ֆազայի էֆեկտի պատկերները, ինչպես նաև կոնտրաստավորումից հետո տարբեր ժամանակահատվածներում՝ ռադիոլոգիական պատկերները: Ցույց է տրված, որ լյարդի ռադիոլոգիական պատկերը ՀՑԿ-ով հիվանդների մոտ կախված է սկանավորման ժամանակահատվածից, կոնտրաստավորումից հետո: Սկանավորման կարճատև ժամանակահատվածի դեպքում՝ կոնտրաստային նյութի ներարկումից հետո, ի հայտ է գալիս լյարդի կոնտրաստավորման հոմոգեն պատկեր: Լյարդի կոնտրաստավորման մաքսիմալ ժամանակահատվածը զարկերակային ֆազայում տեղի է ունենում կոնտրաստային նյութի ներարկումից 18 վրկ. հետո:

Այսպիսով, կոնտրաստային տոմոգրաֆիկ հետազոտության ժամանակ ՀՑԿ-ով հիվանդների մոտ սկանավորման օպտիմալ ժամանակահատվածի որոշումը՝ ռադիոլոգիական պատկերի լավացումով, մեծացնում է ախտորոշման ճշտությունը:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY